«ԱՐԽԻԹՈՒԼՍ» ՍՊԸ

ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ և
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Նիզամի - Մանանդյան փողոցի ոռոգման
նպատակով խորքային հորի կառուցման
նախագծանախահաշվային փաստաթղթերի
կազմման և տրամադրման խորհրդատվական
աշխատանքներ

Պայմանագիր թիվ՝ ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-23/8

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ԳԻՐՔ 3

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«ԱՐԽԻԹՈՒԼՍ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝ Գ. ԱՅՎԱԶՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2023 թ.

ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

ԳԻՐՔ 1. ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ԳԻՐՔ 2. ԳԾԱԳՐԵՐ

ԳԻՐՔ 3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ԳԻՐՔ 4. ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ներածություն

Սույն «Աշխատանքների ծավալները» ԱԾ նախատեսված է՝ շինարարական պայմանագրի Հավակնորդի կողմից իր ֆինանսական առաջարկի մշակման համար:

Հավակնորդը պետք է հաշվի առնի, որ ԱԾ-ի յուրաքանչյուր կետի համար պետք է ներկայացված լինի մեկ գին, որը հետագայում ենթակա չէ փոփոխությունների:

ԱԾ-ում ներկայացված հողային աշխատանքների նկարագրության բաժնում փողոցներում և երթևեկելի այլ հատվածներում, որտեղ հնարավոր են շինարարական մեքենա մեխանիզմների մուտքը նշված չէ գրունտի մշակման եղանակը՝մեխանիզմով կամ ձեռքով: Ձեռքով մշակվող գրունտի ծավալը նշված է միայն այն հատվածներում, որտեղ մեքենա մեխանիզմների մուտքը բացառվում է կամ արգելվում:

ԱԾ-ի մեջ ներառված չեն հետևյալ աշխատանքները Շինարարության կազմակերպման և գործարկման–կարգաբերման աշխատանքների հետ կապված ծավալները, որոք որոշելու համար Կապալառուն պարտավոր է մրցութային առաջարկի պատրաստման փուլում մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման իր տարբերակը՝ ելնելով իր պոտենցիալ հնարավորություններից և աշխատանքների կատարման իր նախընտրած մեթոդներից:

Գնի մեջ պետք է հաշվի առնվի տվյալ աշխատանքի տեսակին վերաբերող բոլոր ծախսերի լրակազմը, ներառելով նաև բոլոր զուգընթաց կազմակերպչական և տեխնոլոգիական գործընթացները:

Ստույգ գնային առաջարկ ներկայացնելու համար Հավակնորդը ուսումնասիրում է իրեն տրամադրված մրցութային նյութերը, կառույցի առկա վիճակը, աշխատանքների կազմակերպման և կատարման պայմանները տեղում, հաշվի է առնում իր տեխնիկական հնարավորությունները, աշխատանքների կատարման տեխնոլոգիական նախընտրած հնարքները և գնագոյացման այլ փաստարկներ:

Հավակնորդը պարտավոր է ընդգրկել իր ֆինանսական առաջարկի միավոր գներում հենյալ աշխատանքների հետ կապված ծախսերը.

- *Շինարարության կազմակերպման և գործարկման-կարգաբերման աշխատանքների հետ կապված, ինչպես նաև շինարարական արտադրության և շինարարության կազմակերպման նախագծի կազմման հետ կապված ծախսերը*
- *Բոլոր ծախսերը, որոնք կարող են առաջանալ պետական համայնքային հողերի ժամանակավոր օգտագործման ընթացքում,*
- *Տեղական իշխանությունների, ճանապարհատրանսպորտային ոստիկանության և այլ կազմակերպությունների հետ անհրաժեշտ համաձայնեցումներն ու դրանց հետ կապված ծախսերը,*
- *Թաքնված կամ նախագծով չնախատեսված ստորգետնյա ինժեներական կոմունիկացիաների ապամոնտաժման, տեղափոխման կամ այլ աշխատանքների հետ կապված ծախսերը :*
- *Փոխհատուցման բոլոր ծախսերը, որոնք կարող են առաջանալ մասնավոր հողատարածքներում պտղատու ծառերի կտրման անհրաժեշտության դեպքում*

Ծավալաթերթը անհրաժեշտ է լրացնել առանց ջնջումների և ուղղումների: